ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԶԱՐԹՈՆՔԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРИ МАРЗ
ЗАРТОНКИ Г ЮГАПЕТАРАН

---

գ.Զարթոնք
հեռ. 093-18-56-92

Թիվ 128

04 Դեկտեմբերի 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ
պրն. Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն մարզպետ

Ի կատարումն Ձեր 13 հունվարի 2010թ. թիվ 25 գրությանը, Արմավիրի մարզի Զարթոնքի գյուղապետարանը Ձեզ է ներկայացնում Արմավիրի մարզի Զարթոնք գյուղական համայնքի ղեկավարի 2013 թվականի Նոյեմբեր ամսին կայացրած թիվ 39-Ա, 40-Ա, 41-Ա, 42-Ա, 43-Ա, 44-Ա և 45-Ա որոշումները և թիվ 12, 13, 14, 15 արձակած կարգադրությունները:

Առդիր 13 թերթ:

Զարթոնքի գյուղապետ՝ Պ.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 11685-13
05 12 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

« 11 » Նոյեմբերի 2013թ. Թիվ 39-Ա

# ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զարթոնք գյուղական համայնքի բնակիչներ՝ Նարինե Յուրիկի Նասրյանի, Մելինա Արամի Գրիգորյանի, Արմենուհի Գագիկի Հովսեփյանի գրավոր դիմումները.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զարթոնքի գյուղական համայնքի բնակիչներին՝ յուրաքանչյուրին հատկացնել 20,0 հազար /քսան հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, նորածին երեխայի ծննդյան կապակցությամբ, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զարթոնքի գյուղապետի ժ/պ Ն.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2013թ. Նոյեմբերի 11
գ. Զարթոնք

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ
Ժ/Պ-Ի 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-ի
ԹԻՎ 39-Ա ՈՐՈՇՄԱՆ

# Ց ՈՒ Ց Ա Կ

## ՍՈՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ

1. Նարինե Յուրիկի Նասրյանի
2. Գրիգորյան Մելինա Արամի
3. Հովսեփյան Արմենուհի Գագիկի

Աշխատակազմի քարտուղար՝ Ք.ԱՋՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 13 » Նոյեմբերի 2013թ. Թիվ 40-Ա

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 8-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 3 որոշումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջարթոնքի գյուղական համայնքի բնակիչ Սաման Սուլեյմանի Ավդալյանին պատկանող բնակելի տանը (ծածկագիր 023-004) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջարթոնքի գյուղական համայնքի 17 փողոցի թիվ 75 տուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Ն.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2013թ. Նոյեմբերի 13
գ.Ջարթոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

« 13 » Նոյեմբերի 2013թ. Թիվ 41 -Ա

# ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զարթոնք գյուղական համայնքի բնակիչներ՝ Փորսոր Հասանի Սլոյանի և Գայանե Մխիթարի Գրիգորյանի դիմումները.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զարթոնքի գյուղական համայնքի բնակիչներ Փորսոր Հասանի Սլոյանին և Գայանե Մխիթարի Գրիգորյանին որպես օգնություն, բուժման նպատակով հատկացնել յուրաքանչյուրին՝ 100,0 հազար /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, որպես սոցիալապես անապահով ընտանիքների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զարթոնքի գյուղապետի ժ/պ՝ Ն.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2013թ. Նոյեմբերի 13
գ. Զարթոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

« 20 » Նոյեմբերի 2013թ. Թիվ 42 -Ա

# ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զարթոնք գյուղական համայնքի բնակիչ Զեյնալ Հասանի Ավդալյանի դիմումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զարթոնքի գյուղական համայնքի բնակիչ Զեյնալ Հասանի Ավդալյանին որպես օգնություն՝ հատկացնել 50,0 հազար /հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ, որպես սոցիալապես անապահով ընտանիքի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զարթոնքի գյուղապետ՝ Պ.ՍԱՐԳՍՅԱՆ

2013թ. Նոյեմբերի 20
գ. Զարթոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---

« 20 » Նոյեմբերի 2013թ. Թիվ 43 -Ա

# ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 17 ՓՈՂՈՑԻ 75 ՏԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՄԱԴ ՍՈՒԼԵՅՄԱՆԻ ԱՎԴԱԼՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Զարթոնք գյուղի բնակիչ Սամադ Ավդալյանը դիմել է, Արմավիրի մարզի Զարթոնք գյուղի 17 փողոցի 75 տան հասցեում գտնվող բնակավայրի տնամերձ 1200 քմ հողամասի և հողամասում առկա շենք-շինությունների նկատմամբ գույքային իրավունքները վերականգնելու վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Զարթոնք գյուղի 17 փողոցի 75 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Սամադ Ավդալյանի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 1200 քմ հողամասի վրա գտնվող բնակելի տան նկատմամբ:
2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Առաջարկել ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Սամադ Ավդալյանի ծնվ.02.02.1967թ., Չինար Ահմադյանի ծնվ. 15.12.1972թ., Մահար Ահմադյանի ծնվ. 27.12.1991թ., Էդիխազ Ավդալյանի ծնվ. 01.01.1994թ., Սլավիկ Ավդալյանի ծնվ. 15.09.1995թ. սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և բնակելի շենքի նկատմամբ, բնակելի տուն 42.3 քմ. ինքնակամ կառույց, բնակելի տուն 61.5 քմ ինքնակամ կառույցներին տրամադրել անշարժ գույքի իրավունքի գրանցման վկայական:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Համայնքի ղեկավար՝ Պ.ՍԱՐԳՍՅԱՆ

2013թ. „ 20 „ Նոյեմբերի
գ.Զարթոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » Նոյեմբերի 2013թ. Թիվ 44 - Ա

# ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 8-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 3 որոշումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջարթոնք համայնքի բնակիչ Գառնիկ Խորենի Ղազարյանին պատկանող բնակելի տանը (Ծածկագիր 034-021) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջարթոնքի գյուղական համայնքի 6 փողոցի 36 բնակելի տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Պ.ՍԱՐԳՍՅԱՆ

2013թ. Նոյեմբերի 26
գ.Ջարթոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » Նոյեմբերի 2013թ. Թիվ 45 - Ա

# ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 8-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 3 որոշումը.

Ո ր ո շ ու մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջարթոնք համայնքի բնակիչ Հերիքնազ Սերգոյի Դըմազյանին պատկանող բնակելի տանը (Ծածկագիր 036-007) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջարթոնքի գյուղական համայնքի 6 փողոցի 5 բնակելի տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Պ.ՍԱՐԳՍՅԱՆ

2013թ. Նոյեմբերի 26
գ.Ջարթոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

17 Նոյեմբերի 2013թ — Թիվ 12

## ՆՈՐԻԿ ՌԱԶՄԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Աշխատանքային օրենսգրքի,, 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարման համար՝

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Ջարթոնք գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ Նորիկ Ռազմիկի Մարտիրոսյանի նկատմամբ կիրառել խրախուսում՝ միանվագ դրամական պարգևատրում՝ 100,0 հազար /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից

Ջարթոնքի գյուղապետի ժ/պ՝ Ն.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2013 թվական Նոյեմբերի 17
գ. Ջարթոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

17 Նոյեմբերի 2013թ Թիվ 13

ՄԱՐԻԱՄ ԱՍԱՏՈՒՐԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության „Աշխատանքային օրենսգրքի„ 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն կատարման համար՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Ջարթոնք համայնքի գրադարանի վարիչ Մարիամ Ասատուրի Ալեքսանյանի նկատմամբ կիրառել խրախուսում միանվագ դրամական պարգևատրում 100,0 հազար /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից

Ջարթոնքի գյուղապետի ժ/պ՝ Ն.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2013 թվական Նոյեմբերի 17
գ. Ջարթոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

17 Նոյեմբերի 2013թ Թիվ 14

ՔՅԱՐԻՄ ԱՐԻՖԻ ԱՋՈՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Համայնքային ծառայության մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի „բ„ ենթակետով, ծառայողական պարտականությունների գերազանց կատարման համար՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Զարթոնքի գյուղապետարանի Աշխատակազմի քարտուղար Քյարիմ Արիֆի Աջոյանի նկատմամբ կիրառել խրախուսում միանվագ դրամական պարգևատրում 100,0 հազար /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից

Զարթոնքի գյուղապետի ժ/պ՝ Ն.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2013 թվական Նոյեմբերի 17
գ. Զարթոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

17 Նոյեմբերի 2013թ Թիվ 15

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի 10-րդ կետով

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ ԵՄ

1. Ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:
2. Ամփոփել և տալ եզրակացություն 2013 թվականի Դեկտեմբերի 04-ին համայնքում կայանալիք փողոցների արտաքին լուսավորություն անցկացնելու նպատակով հայտարարված, պարզեցված ընթացակարգով մրցույթի արդյունքները:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Զարթոնքի գյուղապետի ժ/պ Ն.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2013 թվականի Նոյեմբերի 17

գ.Զարթոնք

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԹՈՆՔ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ
Ժ/Պ-Ի 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի
ԹԻՎ 15 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Նախագահ՝ Պարույր Սարգսյան /գյուղապետ/
2. Քարտուղար՝ Նորիկ Մարտիրոսյան /գյուղապետի տեղակալ/
3. Անդամներ՝ Մարինե Պետրոսյան /գլխ.ֆինանսիստ/
4. Ժորիկ Մելքոնյան /ավագանու անդամ/
5. Մամադ Սլոյան /առաջատար մասնագետ/

Աշխատակազմի քարտուղար՝ Ք.ԱԶՈՅԱՆ